

Մենք կը կարծենք թէ Խորենացիի վրայ հատորներով ուսումնասիրութիւններ հրատարակելու չափ օգտակար գործ մը ըրած պիտի ըլլայ այն հայը որ իրեն ազգակիցներուն սորվեցնէ պատառաքողին գործածութեան եղանակը, գլխարկ մը դնելու և հանելու ձեւը, առանց գիմնասիւնի սիրտը կոտորելու խնդրուած ծառայութիւն մը մերժելու միջոցը, և այն ամեն յիշկները որոնցմով սակայն շինուած է կեանքը:

Եւ եթէ ձայն ունենայինք Իզմիրեանց կտակի յանձնաժողովին մէջ, առաջիկայ տարուան միջանակը կը յատկացնէինք իր ազգը կըրթելու յատուկ աշխատասիրութիւն մը ներկայացնող հայուն:

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Հակառակ պետութեանց եւ Առողջապահական միջազգային խորհուրդին Բ. Գրան ներկայացուցած ծանուցագրերուն ձիտտէի իշխանութիւնները թուլցուցած են մեկուսացման համար ձեռք առնուելիք միջոցները և թայտուած են որ այս նաւահանգստին բնակիչները ուխտաւորներուն հետ հաղորդակցին: Ասոր վրայ Առողջապահական միջազգային խորհուրդը բողոքած է և մեկուսացման փորձերու անօգուտութիւնը տեսնելով՝ ապառ հովակած է ձիտտէն՝ համայնելով 10 օրուան քարանձիւնայի ենթարկել Հիճազէ եկող նաւերը:

Դեսպանները մտադիր են բողոքագիր մը ներկայացնել դրան:

— Հացի սղութեան պատճառով Իտալիոյ շատ մը քաղաքներուն մէջ պատահած խռովութիւնները հետեզհետէ աւելի սուր կերպարանք մը կը ստանան: Նոր յուզումներ տեսնուին Լիմօնիի, Գիէթիի, Ասթուրայի և Մոֆէթիայի մէջ:

Նորագոյն տեղեկութիւններու նայելով, Նաբոլիի մէջ պատահած դէպքերը հեռագրով իմացուածներէն շատ աւելի լուրջ եղած են: Քաղաքին մէջ գտնուող 800 ոստիկանները չբաւելով, շրջականերէն ուրիշ 3000 ոստիկաններ կանչուած են ածապարանքով:

Նոյն իսկ թնդանօթներ մէջտեղ հանուելու և մարտկոցներ կազմուել են, սակայն բարեբախտաբար, զինուորներուն զմայլելի պաշարիւնութեան շնորհիւ, քանի մը վերաւորուածներ միայն կան:

Վերջի հեռագիրներուն նայելով Միլանի մէջ տեղի ունեցած ցոյցերը ոչ թէ պարզ խռովութիւններ, հապա պզտիկ յեղափոխութիւններ են եղեր: Կանոնաւոր ճակատամարտներ տեղի ունեցել են ժողովրդեան և զինուորներուն միջեւ: 300 հոգի մեռած և 1000 հոգիէն աւելի վիրաւորուած են:

— Նմանապէս Կ. Պոլսոյ մէջ հացին գինը օր ըստ օրէ վրայ կը դնէ: Այիւրի վաճառականները ապառիկ չեն տար հացագործներուն՝ որոնք այդ պատճառով իրենց յաճախորդները գոհացնելու անկարողութեան կը դատապարտուին: Աղքատ դասակարգը անտանելի վիճակի մէջ է: Շատ մը փուռերու առջեւ անկարգութիւններ պատահած են: Կառավարութիւնը յանձնաժողով մը որոշած է այդ կացութեան դարման մը գտնելու համար:

— Կ. Պոլսոյ անգլիական դեսպան Սըր Ֆիլիք Բըրի Հոմի դեսպան անուանուած է Սըր Բլար Ֆորտի տեղ: Կըսուի թէ Թէհրանի դեսպան Սըր Մորգիլը Տիւրանի պիտի յանձնուի այդ պաշտօնը:

ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆ

ԺՕՌԺ ԿՈՒՍԻՕ

Շաքաթ իրիկուն ուշ առեւ, Գահիրէի մէջ տարածուեցաւ Պ. Ժոն Կուսիօի մահուան լուրը:

Անկո-եգիպտական դրամասան մահկանանքէն ետք Վերջերս Աթենք գացած էր հիւանդութիւնը դարմանելու համար, հոգիւն աւանդել է այդ ֆաղափին մէջ ամցեալ ուրաք գիշեր:

Աղեֆասանդիոյ ամենէն ծանօթ, ամենէն ժողովրդական եւ ամենէն համակրելի դէմքերէն էր Ժոն Կուսիօ, որ միշտ յարգանքով եւ հիացում ազդած է ամենուն իրեւ ճշմարիտ հայրենասէր, տաղանդաւոր վարչական, առաջինի եւ պատմական մարդ, եւ որ միշտ իր աշակցութիւնը նուիրած է բարեգործական, մարդասիրական ամեն գործի մէջ:

Ժոն Կուսիօ 57 տարեկան կը մեռնի: Ինքնօգնութեան գաւաթ՝ իր բնածին խելով՝ աշխատասիրութեամբ եւ իր ուղղամտութեամբ հասած էր այդպիսի կարեւոր պաշտօնի մը ինչպէս է Անկո-եգիպտական պալատի սեփականութիւնը:

Աղեֆասանդիական ասպարէզէն դուրս՝ անձնուէր, կրակոտ հայրենասէրի անուն մը ունէր Կուսիօ, որով սիրելի եւ յարգելի եղած էր Աղեֆասանդիոյ ամբողջ հասարակութեան:

Յունաստանէն՝ յեղափոխական շարժումի մը առաջին շրջը առնուելուն պէս այդ շրջը, ծանր մարդը մեկ կողմ կը նետէր պաշտօն, դիւր, ընտանիք եւ գաւաթ ու շունչ ուղղակի Աթենք կառնէր: Ազատութեան սուրբ դասին համար ֆանիցս իր կեանքը վստահի դրած էր պատերազմի դաշինք վրայ:

Վերջի պատերազմին՝ բողոքով ինքնաճարեցաւ դրամասան մէջ ունեցած իր բարձր պաշտօնէն եւ Աթենք երթալով մօտէն հետեւեցաւ պատերազմին, որուն դժբաղդ ելլը անշուշտ չխուր սպառնութիւն մը բողոք հայրենասէրին սրտին մէջ եւ գուցէ փութացուց անոր մահը:

Այդ ազնիւ հայրենասէրին օրինակելի կեանքը քեզարեց մեզ այս յարգանքի տոհմը նուիրել անոր յիշատակին:

Հոս տեղն է յիշատակել թէ Ժոն Կուսիօ մարդասիրաբար աշխատեցաւ մեր 1896ի գաղթականները պատկարարելու համար բացուած հանգանակութեան գործին:

Այս ժամը առթիւ, Փարոսի իմբադրութիւնը, ի դիմաց եգիպտական հայութեան, իր ջերմ վշակցութեան արտայայտութիւնը կը ներկայացնէ Այրի Տիկին Ժոն Կուսիօի եւ ընտանեաց:

ՊԱՏԵՐԱԶՄԸ

Մանիլայի կարեւոր ծովամարտէն ի վեր, պատերազմի ընդարձակ սահմաններէն հասած հեռագիրներն ու տեղեկութիւնները, լրացուցիչ մանրամասնութիւններէ զատ նոր բաղիւմի մը լուրը չեն բերել մեզի: Նոյն իսկ հակառակ այդ փայլուն յաղթութեան, Ֆիլիպինի կողմէն մայրաքաղաքը տակաւին չէ գրաւուած ամերիկացւոց կողմէ: Այդ դէն ատիկա շատ դժուար գործողութիւն մըն է և առանց օգնական զօրքի գրեթէ անկարելի է որ Տէվէյ ծովակալը իր 2000 նաւատիրներով կարենայ դիմագրել Մանիլայի 20 հազար զինուորներուն: Նաւատորմին օգնութիւնով շատ շատ ժամանակաւոր դրաւում մը կարելի է, որովհետեւ նաւատորմը չկրնար Մանիլայի ծոցին մէջ յաւիտենապէս մնալու դատապարտուիլ:

Միւս կողմէն սակայն, Աղլանտեանի շուրջերուն մէջ զարհուրելի ծովամարտ մը մօտաւոր կերեւայ և վայրկեանէ վայրկեան հեռագրի կը սպասուի անհամբեր: Քաղաքական ձեռնհաս շրջանակներու մէջ կարծիք դոյացած է թէ այդ նոր ճակատամարտը եւ թէ նոր պարտութիւն մը ըլլայ սպանիացւոց համար, պատերազմը վերջացած կարելի է համարել: Սակայն սպանիացւոց յամառ և անխոհեմ դիւցազնութիւնը կասկածիլ կուտայ մեզի պատերազմին այդքան մօտաւոր վախճանէն:

Ահաւասիկ շարաք օրուքն ի վեր պատերազմին վրայով ստացուած հեռագիրներն ու տեղեկութիւնները:

Ամերիկեան տեղեկագիրը որ Հոնկ-Գոնկ զրկուած է, կըսէ թէ սպանիական նաւատորմի զորքանոց է: 150 սպանիացիներ մեռած՝ ու միմիայն քանի մը ամերիկացիներ վիրաւորուած են:

— Տէվէյ ծովակալին մէկ հեռագրին նախելով, արդէն զինուորներ ցամաք հանած է ելլը՝ այնպէս որ գրեթէ գրաւուած կը նկատէ Մանիլան:

— Ռիլթերի հեռագրական գործակալութեան Մանիլայի գործակալաւոր, որ սկանաւորական վկայ եղած է պատերազմին, կը պատմէ թէ ամերիկեան նաւատորմը ապրիլ 30ի գիշերը մտած է Մանիլայի ծոցին մէջ, երկու ընդժովայ ականներ պայթած են առանց վնաս մը պատճառելու: Ծովամարտը սկսած է առտուան ժամը 5ին: Էն առաջ սպանիական նաւատորմը սկսած է կրակ ընել վեց հազար եարտա հեռաւորութեան վրայ, առանց արդիւնքի: Ամերիկացիք մինչեւ չորս հազար եարտա մօտեցած և յետոյ սկսած են թնդանօթաճգութիւնը: Կէս օրէն վերջ սպանիական նաւատորմը ամբողջովին կործանած էր՝ մէկ մասը այրելով, մէկ մասը ընկղմելով, ու մնացած մասը լուրթեան դատապարտուելով: Չինանոցը պայթած է: Սպանիացիներու կորուստը ահագին է:

— Հաիթիի ելլելները թնդանօթաճգութեան մը ձայնը լսուելով, կարծուած է թէ նաւատորմիները իրարու հանդիպած էին: Բայց ֆրանսական շոգենաւ մը կը պատմէ թէ ինք տեսած է սպանիական զօրաւոր յաճաւորակ մը որ ամերիկեան Մօնկոմերի նաւը

կը հալածէր : Ատիկա կը ցուցունէ թէ սպա-
նիական և ամերիկեան նաւատորմի շատ
մօտ են իրարու և թէ մօտալուս ծովամարտ
մը անխուսափելի է :

—Մանիլայի ծովամարտին մէջ սպանիա-
կան նաւատորմին արձակած ուսմբերը տա-
կաւին իրենց նպատակին չհասած ծովը
կիւնային . այնպէս որ ամերիկեան նաւատոր-
մը զանազան ռմբակոծած է նշանատախտակի
մը պէս : Սպանիացիները յանգուզն և ա-
րիական փորձ մը ըրած են թշնամիին մօտե-
նալու համար, բայց հազիւ թէ նաւերէն մէկը
բիչ մը կը յառաջանար , ամերիկեան թնդա-
նօթները ամբողջ անոր վրայ կուղղուէին : Այդ-
պէսով փճացած է սպանիական ամբողջ նա-
ւատորմիդ :

Ամերիկացիք կը գովեն սպանիական Մօն-
թօյօ ծովակալին զմայելի քաջասրտութիւնը :

—Քատիչէն կը հեռագրեն թէ այդ նա-
ւահանգստին մէջ գտնուող Սպանիոյ ամբողջ
պատերազմական նաւերը հրաման ստացած
են երթալ միանալ Քար Վէրի նաւատորմին՝
որ ճամբայ պիտի ելլայ դէպի Քուսկա :

—Մայիս 4ին նախարարաց խորհուրդը
գումարուած է Մատրիտի մէջ , խնամակալ
թագուհիին նախագահութեամբ : Կըսուի թէ
միջոցներ ձեռք առնուած են 1. կազմելու
համար մեծ յանձնաժողով մը որ պիտի զբա-
ղի նաւատորմին օգնելու համար եղող հան-
գանակութիւններով : 2. Մանիլայի ծովամար-
տին մէջ կորսուած պատերազմական նաւե-
րուն տեղ նորեր գնելու համար : 3. Նաւա-
տորմիդը զօրացնելու համար : Նոյնպէս ներ-
քին խուլութիւններու առաջը առնելու
յատկացուած շատ մը ծրագիրներ քննուած են :

—Սպանիոյ շատ մը քաղաքներուն մէջ
Անգլիոյ դէմ ցոյցեր տեղի կունենան : Անգ-
լիական հիւպատոսները ոստիկանութեան օգ-
նութիւնը խնդրած են :

—Լուրջ խուլութիւններ տեղի ունեցած
են Լինարի մէջ (Սպանիա) : 12 հոգի մեռած
և 50է աւելի վիրաւորուածներ կան :

Նոր անկարգութիւններ տեղի ունեցած
են ուրիշ շատ մը քաղաքներու մէջ ալ :

ՔԼԻՊ ԽՏԻՎԱԼԻ ՏՐԱՍԸ

Քիւլա խտիվալի անդամները, զարհուրելի տե-
սարանի մը ներկայ գտնուեցան շարաթ իրիկուն
ժամը 7ը քառորդ անցած :

Բռնէն Ահմէտ պէյ իպրահիմ , հանդուցեալ Ահ-
մէտ փաշայի որդին , ատրճանակի երեք հարուած
պարտւած է բռնէն ֆուատ փաշայի վրայ որ Բարձր.
Խտիվին հօրեղբայրն է ու միանգամայն օճրագործին
հօրեղբայրն ու քեռայրը :

Աւասիկ թէ ինչ պարագաներու մէջ գործուած
է մարդասպանութեան այդ սոսկալի փորձը :

Բռնէն ֆուատ փաշա Քիւլային պատշգամբ նըս-
տած էր , իր եղբոր բռնէն Հիւսէյնի փաշայի քոր-
տուղարին՝ Սապպաղ պէյի հետ : Այդ պահուն կտր-
մը կեցաւ Քիւլային դրան առջեւ և բռնէն Ահմէտ
պէյ վար իշնարով անկէց : Քիւլային դռնէն ներս մտաւ :

Այդ տեսնելով նախա լգացում մը ունեցաւ բռնէն
ֆուատ փաշա , թէ զինքը տեսնուլու համար եկած
է ան , որովհետեւ Քիւլային անդամ չէր և սովոր-
ականէ գուրս բան մը ունէր անոր այցելութիւնը :
Ուստի զայն չտեսնելու , կամ չգիտնալու համար,
ընթերցարարն մտաւ : Միևնոյն վայրկեան բռնէն
Ահմէտ պէյ , որ հակառակ դռնապանին քաղաքավար
ընդդիմութեան վեր ելած էր , ներս մտաւ ատրճա-
նակ մը ձեռքը , սպառնալից երեւոյթով : Բռնէն
ֆուատ փաշա բնագրական շարժումով մը Ապպա-

նի փաշայի ետեւ ապաստանեցաւ վայրկեան մը ,
բայց շուտով արժանապատուութեան զգացումով մը
մէկդի բողոքեցաւ : Նոյն վայրկեանին մարդասպանը
ատրճանակը պայթեցուց իր քեռայրին վրայ և
ֆուատ փաշա , փորէն զարնուած , արիւնլուայ գե-
տին ինկաւ : Ատով չգոհանալով , Ահմէտ պէյ պա-
ղարկեցութեամբ մօտեցաւ վիրաւորին և երկու ան-
գամ ալ կրակ ըրաւ , որունքէն վիրաւորելով զայն :

Ատրճանակներու ձայնէն Սալա փաշա սրահը
մտաւ , շուտով վեր վերցուց բռնէն ֆուատը , հա-
գուտները հանեց և քանտրէի մը վրայ պառկեցուց :
Բռնէնը խտիվէն պոռայ . «Կը մեռնի՞մ կոր , կը
մեռնի՞մ կոր , խեղճ մայրս» :

Ներկաներէն շատերը վաղցեցին բժիշկ կանչե-
լու և ուրիշներ պատշգամբ ելան ոճրագործը ձեռ-
քովալելու համար հրամաններ տուաւ :

Խառնաշփոթութիւններէն օգտուելով բռնէն Ահ-
մէտ պէյ մինչեւ փակը իջած էր արդէն երբ քօնթ
Սալա և Եպագուպ Արթին փաշա վրայ հասնելով
ձերբակալել տուին զայն և մինչեւ Ապտինի ոստի-
կանատունը գացին միասին : Ոճրագործը այդ մասին
ո և է դժուարութիւն չցուցուց :

Քառորդ ժամ մը վերջ ամէն կողմէ վիրաւորին
ազգականները Քիւլա կը հասնէին ետեւէ ետեւ :

Բժիշկները եկածուն պէս անկողնի մը վրայ
պառկեցուցին վիրաւորը և նախնական խնամքները
տուին իրեն : Սրունքին վէրքը թէեւ անփնտէր բայց
փորինը շատ մտահոգութիւն կը պատճառէ , կը կար-
ծուի թէ լեարդը փնտաւած ըլլայ : Ահմէտ փաշային
ներուն թէեւ վախեցուցաւ որ հիւսնող գիշերը չի
կարենայ հանել , բայց հետզհետէ բարւոյն է քիչ
մը բռնէն ֆուատ փաշայի վիճակը : Ահաւասիկ եր-
կուարթի առուտան տեղեկագիրը .

«Բարձր , բռնէն ֆուատ փաշա հանգիստ գիշեր
մը անցուց : Իր վիճակը նուազ մտահոգութիւն կը
պատճառէ :

«Ստուագրութիւն . Քուսկոս , Հէս , Միլթըն , Թուր-
թուլիս» :

* *

Գեղեցիկ , երեսուն տարեկան երիտասարդ մըն
է բռնէն ֆուատ փաշա , ժպտուն դէմքով , համակ-
րելի , կատարեալ ազնուականի տիպար մը : Խտիվի
մէջ առած է իր գինեւորական կրթութիւնը և տոտր
համար մայրենի լեզուին պէս կը խօսի իտալերէնը :
Մարդասպանը , բռնէն Ահմէտ պէյ , 20 տարե-
կան , պղտիկ , նիհար , առանց պէխի երիտասարդ մըն
է : Զգային տաքնապէ մը առաջ եկած կենթադրուի
իր ոճիրը :

Գիշեր մը Ապտինի ոստիկանատունը պառկելէ
ետք յաջորդ օրը մեծ Զարթիւն փոխադրուած է :
Նախնական հարցաքննութեան մը ժամանակ
խոստովանած է իր ոճիրը , աւելցնելով սակայն թէ
ինք միմիայն վիրաւորել ուզած է իր հօրեղբայրը :
Նրբ իր այդ արարքին պատճառը հարցուած է ի-
րեն , պատասխանած է թէ քրոջը միջոց լուծելու
համար էր : Բայց միւս կողմէն իր քրոջը յայտարա-
րած է թէ ինք եղբորը չէ գանգատած ֆուատ փա-
շայի վրայով :

Բարձր խտիվը շատ յղգուած է այս ոճրին
պատճառաւ և ամեն վայրկեան հեռագրով տեղեկու-
թիւններ կը ստուին իրեն , վիրաւորին վիճակին վրայ :

Բժիշկներու երեքշաբթի առտուան տեղեկա-
գիրը աւելի բարւոյն էր նկատէ վիրաւորին վիճակը :

ՏԵՂԱԿԱՆ

Բարձր , խտիվը մտադրութիւն ունի այս
ամառ ճամբորդութիւն մը ընել գէպի Եւ-
րոպա : Նոյնպէս կարելի է որ ն. Բարձրու-
թիւնը Պոլիս երթայ :

Տակաւին այդ մասին որոշուած բան մը
չկայ սակայն . ոչ մեկնումին թուականը յայտ-
նի է ոչ ալ ուղեգիրը :

—Վաղը նախարարաց խորհուրդը պիտի
գումարուի Աղեքսանդրիա , Բաւ-էլ-Թիւնի պա-
լատին մէջ , Բարձր , խտիվին նախագահու-
թեամբ :

—Կ. Պոլսէն ստացուած հեռագիր մը կը

ժանուցանէ թէ երկուարթի առտու հոն ժա-
մանած է Բարձր . խտիվին մայրը «Մահրուսա»
չոգենաւով , և իշեւանած է Պէպէքի պալատը :

—Երկուարթի առտու Սիւէդէ Գահիրէ
եկած է Տըթ . Կարթնըր :

Իր տեղեկագրէն կը յայտնուի թէ այդ-
քաղաքին առողջական վիճակը գոհացուցիչ
է և թէ «Մէհալէ» չոգենաւին մէջ պատա-
հած ժանտախտի դէպքէն զատ նոր դէպք մը
չէ պատահած : Հաստատուած է թէ Սուա-
քինէ եկող Բահմանիէ չոգենաւին մէջ մեռ-
նող զինուորը թոքախտէ մեռած է և ոչ թէ
ժանտախտէ , ինչպէս կը կարծուէր :

Էլ-Թոր մաքրանոցէն ստացուած նորա-
գոյն տեղեկութիւններու նայելով կատկածե-
լի նոր դէպք մը պատահած է «Մէհալէ» չո-
գենաւին նաւազներէն մէկուն վրայ : Ինչպէս
կը յիշուի այդ չոգենաւը քարանթինայի են-
թարկուած է արդէն :

—«Ժուրնալ տէ Թրալօ է տը Լէնտիւս-
թրի»-ի վերջի թիւին մէջ կը կարդանք թէ ,
Պօղոս փաշա Նուպար դիտաւորութիւն ունի
եգիպտական երկաթուղիներու վարչութեան
անդամակցութենէն հրաժարիլ , և հանդուս-
եան թոշակի կոչուիլը խնդրել : Իրեն պիտի
յաջորդէ հանրօգուտ շինութեանց նախարա-
րութեան քննիչներէն Իսմայիլ պէյ Սըրրի :

—Թըքական յանձնաժողով մը , Ատա-
նայի կուսակալ Հասան պէյ Հիլմիէ , Հիլմիէին
էֆէնտիէ և Մուհամմէտ Հաֆիզ պէյէ բաղ-
կացած , Պոլսէն եգիպտոս եկած է շարաթ
իրիկուն և շուտով ճամբայ ելած է դէպ ի
Սիւէդ և Եէմէն՝ ուր քննութիւն մը պիտի
բանայ վերջերս այդ նահանգին մէջ տեղի ու-
նեցած խուլութիւններուն վրայ :

—Ալիւրի գիներուն բարձրացումը եգիպ-
տոսի մէջ ալ իր ազդեցութիւնը ունեցած է :
Գահիրէի և Աղեքսանդրիոյ մէջ թէեւ
հացին գինը չէ բարձրացած բայց ասոր փո-
խարէն կշիռը պակսած է :

Կըսուի թէ շատ մը հացադործներ ա-
լիւրին մէջ գաճ և փայտի սղոցուք կը խառ-
նեն եղեր : Աղեքսանդրիոյ կառավարիչը այդ
խարդախութեան առաջը առնելու համար
հացադործներու շէխերը իր քով կանչել տա-
լով անոնց հետ խորհրդակցած է հասարա-
կութեան աղէկ հաց կարենալ տալու միջոց-
ներուն վրայ :

Երկար խորհրդակցութենէ մը ետքը , ո-
րոշուած է հացին օխային վրայ 1 զրուշի յա-
ւելում մը ընել : Հետեւաբար այսուհետեւ
3 զրուշի տեղ՝ 4 զրուշ պիտի արժէ հացին
օխան :

Ա.Զ.Դ

Դաշնակի վիճակահանութիւնը որ ամսոյս 8ին
տեղի պիտի ունենար , ինչ ինչ պատճառներով յե-
տաճգուած ըլլալով , անպատճառ պիտի կատարուի
առաջիկայ կիրակի , 15 Մայիս :

ՅՈՎԱԿԻՄ ԶԱՏԷՆԱՆ

ԺԱՄԱԳՈՐԾ

ԽԱՆ-ԽԱԼԻՒ ՓՈՂՈՑ

ձեւանիւր խաւն , րիւ 16

Գ Ա Հ Ի Ե

Արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ
յիշեալ ժամագործը՝ պատրաստ է գոհացնել այն
ամեն յաճախորդները որոնք նորոգելու համար ժա-
մացոյցներ պիտի յանձնեն իրեն :

Դիւրամտացելի գիներ :

ՀՈՍԿԵ ՀՈՆԿԵ

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՎՐԱՅ

Հանրի Ռօշթու, Էմբրանգիժանի խմբագրական տը սա խմատով հեռագիր մը ուղղած է ամերիկացի ծերակուտական Մըթըր Մորիանի. «Յրանայի բոլոր հանրագիտականները քուսպիներուն և անոնց ազատարարներուն հետ են սրտով»:

—Ամերիկացի միլիոնատէր վը, Մըթըր Չատըրը, իր ծախքով կամուտորաց դռնդ մը կազմած է:

—Աւատրիոյ կառավարութիւնը չորս մարտա նաւ տուած է Սպանիոյ, պայմանաւ որ անոնց արժէքը վճարէ երբ որ կարենայ:

—Սֆաբիայէն (Յունաստան) Տաքալօ Էման, քիս անուն մէկը Աթէնքի ամերիկեան հիւպատոսին նամակ մը գրելով արտօնութիւն ուղեր է հելլէն ազգային տարաւով կամուտորաց խումբ մը կազմել սպանիացոց դէմ պատերազմելու համար: Հիւպատոսը մերժողական պատասխան տուած է:

—Նիւ-Եորքի նաւահանգստին Լոնկ Ալլիի ամբողջին 30,000 լիպրա ծանրութեամբ օդաւորիկ մը կապուեր է որ գիշեր ցերեկ օդին մէջ պիտի պարտի: Մէջը կայ հեռաձայն գործի մը որ Նիւ-Եորքի շրջակայ ամրութեանց հետ հաղորդակցութեան մէջ է:

—Աւատրիոյ Ֆրանս Եօղէֆ կայսրը 150,000 ֆիորին նուիրեց Սպանիոյ պատերազմական հանգանակութեան:

—Նիւ-Եորքի մէջ շատ մը հայեր կամուտ որ Նուոր գրուած են ամերիկեան բանակին մէջ, Գուպայի հարստահարչներուն դէմ պատերազմելու համար:

—Մայրաքաղաք Արեւելքի գերման նաւատորմին մէկ մասը հրաման ստացած է Մանիլա երթալով պաշտպանել գերմաններուն շահերը:

—Հաշիւ եղած է որ Ամերիկա իր բանակին և նաւատորմին համար օրական երկու հարիւր հազար անգլ. ոսկի կը ծախսէ:

—Իրլանդի կերպար մէկ քանի գործարար պարտաւորեցան աշխատութիւնները դադարեցնել. ուսմք ալ անանկացան. պատճառը սա է թէ պատերազմը սկսելէն ի վեր պէտք եղածին չափ վառ և կանեփ չի հասնիր Ամերիկայէն:

—Բարիլոյի երկու պատանի, մէկը 16 և միւսը 18 տարեկան, անցեալ շաբաթ հօրենական տունէն փախած են, իրեն կամուտ ծառայելու համար սպանիական բանակին մէջ: Սահմանադրին վրայ երկուքն ալ ձերբակալուած են:

—Հալանայի Արկուէլէս մարքիզը 10 միլիոն ֆրանք նուիրած է պատերազմին համար:

—Ամերիկեան կառավարութիւնը ծանոց թէ արեւը մայր մտնելէն յետոյ արդիւրած է նուերուն անցնիլ Սանտի Հուքէ (Նիւ-Եորքի նաւահանգիստ). հակառակ սպարազային պիտի ենթարկուին նաւահանգստին մուտքը պաշտպանող թնդանօթներու կրակին:

—Բարիլոյի սպանիական դեսպանատուն մէջ Սպանիոյ ի նպատ կատարուած հանգանակութեան դուարը 480,000 ֆրանքի հասած է:

—Մարսիմօ Կոմէ, Գուպայի ապստամբներու հրամանատարը ի մօտոյ մեծ ուժով պիտի յարձակի Հալանայի վրայ:

—Ֆրանսական Արեքիւզ և Նայաս, Բ. կարգի յաճախորդները որոնք Պրէսթ կը մնային, սպառազինուերու հրաման ստացած են: Այս մարտանաւերը Անգլիկան կղզիները պիտի ուղեւորին:

—Սպանիո-ամերիկեան պատերազմը որ այնքան բարձրացուց և կամ պիտի բարձրացնէ ցորենի, ալիւրի, բանակի և իւրի գինները, ոչ նուազ աղղկեցութիւն քրած է յարգէ զլիարկներու վրայ սրտնց գինները իրաւունքներ ունենալ կ'սկսին Ասոր պատճառը այն է որ Գուպայէն կը բերուէր արմաւենի տերեւները որոնցով յարգը կը հիւստի:

—Նոյնպէս պատերազմին պատճառով սպանիական ասպրանքները նուազած են Մարսիլոյ հրապարակէն: Տասնհինգ օրէ ի վեր ոչ գինի, ոչ նարինջ և ոչ ալ չոր պտուղներ ներմուծուած են ի Մարսիլ:

—Շատ կը վախցուի որ Մարտիտի մէջ մեծ յեղափոխութիւն մը կը ծագի, սպանիական նաւատորմին կրած պարտութիւններուն հետեւանօք:

Ա. Զ. Դ

Հարտարապետ Պողոս Խտրեան, վկայեալ Պողոսոյ գեղարուեստական վարժարանէն, ճարտարապետական գրասենեակ մը բացած է Մուսի փողոց, ժամացործ Բրաւէր ընկ. ղէմի շէնքին երկրորդ յարկը: Կը ստանան շինութեանց ու նորոգութեանց վերաբերեալ ամէն տեսակ ճարտարապետական յանձնարարութիւններ: Նոյն փափարողներուն պէտքերը կ'ուրբեան և ճարտարապետութեան մասնաւոր գասեր կ'ստանգէ:

Գրասենեակը բաց է ամէն օր առաւօտեան ժամը 8էն 12 և 2էն 7 (յ.մ.) 7—10

Դ. Ի. Մ. Ե. Յ. Բ.

Գ. Է. ՍԷԼՎԱՃԵԱՆ Վ.Ա.ՃԱՌԱՏՈՒՆԸ
ԳԱՀԻՐԷ Մուսի փողոց ԳԱՀԻՐԷ

Եթէ կուզէք ոսկի ժամացոյցներ արանց կանոնց 120 դր. և մինչեւ 2500 դր.

Եթէ կուզէք արծաթ ժամացոյցներ 50 դր. և մինչեւ 200 դր.

Եթէ կուզէք նիւքէլ ժամացոյցներ 10 դր. և մինչեւ 100 դր.

Եթէ կուզէք պատի և բոնսօյի բազմադան լանտիւրներ գաղղիական եւ ամերիկեան

Եթէ կուզէք նորաձեւ շքովաներ ոսկի, արծաթ եւ ոսկեպատ

Եթէ կուզէք այլ և այլ գոհարներ, ազամանքեայ, ոսկի, արծաթ, ոսկեպատ

Դ. Ի. Մ. Ե. Յ. Բ.

Գ. Է. ՍԷԼՎԱՃԵԱՆ Վ.Ա.ՃԱՌԱՏՈՒՆԸ
ՄՈՒՍԲԻ ՓՈՂՈՑ ԳԱՀԻՐԷ 9—20

PHARMACIE DE LA POSTE
ԴԵՂԱՐԱՆ Ե. ԱԻԱԳԵԱՆ

ԳԱՀԻՐԷ, ՓՈՍԹԱՅԻ ՇՐԱՊԱՐԱԿ. ՄԱՍԹԱՅԻ ԱՊԱՐԱՔԻՆ ՏԱԿ

Այս նորահաստատ գեղարուին մէջ յաճախորդները պիտի գտնեն եւրոպական բաւարար գործարաններէն բերուած թալմ գեղեր, չափաւոր գիններով: Դեղագիրները ամենայն խնամօք և ուշադրութեամբ կը պատրաստուին:

Անգլիական և ֆրանսական սքեսիալիքներ: Թալմ համալիք ջուրեր, անուշահոտ քիւրք և Ե. Բնալուծական և մանրագիտական քիմիկներ: Դեղարանս կը յաճախեն հայ և օտարազգի ծառայողներ:

Բժշկական ձրի խորհրդածութիւն: ազգատաց համար: 49—50

ՆՈՐ ՓՈՒՌ

ՀԱՅԿԱԿԱՆ

ՏԱՐՊԷԼ ԿԻՆԷՆԱ ՓՈՂՈՑ

Ա. Զ. Դ

Ստորագրեալս պատիւ ունինք ծանուցանելու արգոյ հասարակութեան թէ ամսոյս 1էն սկսեալ գնած ենք Տարպէլ-Կինէնայի Հայկական փողոց և թէ մենք պիտի շարունակենք այսուհետեւ անոր գործառնութիւնները: Այլ փողոցի գործերու եղանակին մէջ խնամատ բարեկարգութիւններ ներմուծած ըլլալով՝ կարող պիտի ըլլանք եւրոպական ունի փողոց մը պէս լիալի գոհացնել իրենց վատահոթութեամբ գմեղ պատուոյ յաճախորդները:

Կը սիրենք յուսով որ պատուական ազգայինը զմեզ պիտի բաջալերեն մեր այս ձեռնարկին մէջ:

Ս. Զուրիկեան եւ Նղբաւր Հազագործեան

13—15

ՃԱՇԱՐԱՆ “ԼՈՒՍԻՆ,”

Քրիտի Լիօնի բովընտի փողոցը Արեւ ճաշարանի ճիշտ դէմը նոր բացուած այս հայկական ճաշարանին մէջ յաճախորդները պիտի գտնեն ընտիր անուշոց, կերակուրներու պէսալիսութիւն, խընամեալ մաքրութիւն, փութկոտ սպասարկութիւն և գիւրամատչելի գիներ:

Ի մօտոյ նոր ճիւղ մըն ալ պիտի տեսցուի գաւթեղեր և Բեպապի 5—8

ՍԱՓՐԻՉ

ՕՇԱՆՆԷՍ ՊԵՅԼԵՐԵԱՆ

Բերայի ճարտար սափրիչներէն Օհաննէս Պէյլէրեան որ մէկ ու կէս տարիէ ի վեր Գաւթիէ հաստատուած է և մեծապէս գոհ թուողացած իր յաճախորդները, այս անգամ իր նոր խանութին մէջ (Աթապա Էլ Խատրա, թրամուէյի կայարանին դէմ) ամեն դիւրութիւն ու հանգստաւէտութիւն կը նմայէ մաքրութիւն, արագութիւն ու վայելչութիւն՝ թէ անիւման և թէ վարայարգարութեան մասին:

ՖՈԹՕԿՐԱՖԻ ԷԺԻԲՍԻԷՆ

Ք. ՊԻՐՔՄԷՃԵԱՆ

ՇԱՐԱ ՄՈՒՀԱՍՄԷՏ-ԱԼԻ ԹԻԻ 120

Արհեստին վերջին կատարելագործութեան համեմատ հաստատուած այս լուսանկարչարան մէջ ամեն տեսակ լուսանկարներ կը հանուին գոհացուցիչ գիններով:

Ամեն մեծութեան ԱԿՐՈՆՏԻՍԸՄԱՆՆԵՐ 10—10

ՏՊԱՐԱՆ

“ՓԱՐՈՍ” ԼՐԱԳՐԻ

ԿԸ ՏՊԱԳՐՈՒԻՆ

ԱՄԵՆ ԱԵՁՈՒԷ ՇՐՁԱՐԲԵՐԱԿԱՆ

ՄԱՀԱՁԴ, ՀՐԱԽԻՐԱԳԻՐ, ԱՅՅԱԲԱՐՏ

ՑԱՆԿԵՐ, ՏԵՂԵԿԱԳՐԵՐ

ՀԱՇՈՒԷՑՈՒՑԱԿ, ՆԱՄԱԿԱԳԼՈՒԿ

ՏՈՄՍԵՐ

Եգիպտոսի որ և է քաղաքէ կամ գիւղէ եկած յանձնարարութիւնները ամենայն խնամօք և փութպ կը կատարուին:

ՎԱՅՐԿԵԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՆ

Այցեխարսերու եւ տոններու

Տպարանը բաց է պմն օր բացի կիրակի եւ 8օն օրերէ, առաւօտեան ժամ 7էն երեկոյեան ժամ 7:

ԼՈՒՍՑԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻՉ

Մ. ՏԵՐ ՍԱՀԱԿԵԱՆ

ԺԱՌՏԷՆ ՌՕՒԷԹԻ, ՇՐԱՆՏ ԱՋԱՏԱՆԻ ՆԱԿԻՆ ԽԱՆՈՒԹԸ

ԿԸ ԼՈՒՍՑ ամեն տեսակ ճերմակեղէններ ու հագուստներ. ԿԱՐԴԻԷ արանց և կանանց շապիկներ, շրջագետներ, ԿԸՆ՝ մաքրութիւն, ճշգրտահաշիւներ, և խիստ չափաւոր գին: 18—24

Le Gérant: D^r. A. S. HAGOPIAN
Տպագրութիւն ՓԱՐՈՍ Լրագրի